



Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավարի 2011թ. օգոստոսի 5-ի
N 388-Ա հրամանով

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավարի 2011թ. հունիսի 9-ի
N 201-Ա հրամանով

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարարի 2014թ. մայիսի 7-ի
N 203-Ա հրամանով

Ընկերության տնօրեն՝ Ա. Ղուկյան



Կազմված է 18 էջից 15.05.2014թ.
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 14.06.2011թ.
գրանցման թիվ 286.120.23877
վկայական 03 Ա 173877
հարկ վճարողի հաշվառման համար
02707093

14.06.2011 թ. գրանցված կանոնադրության
թիվ 001.2 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձնաց պետական
ռեգիստրի _____ տարածքային բաժնի
կողմից

19.05.2014թ.

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ը Ռ Ի Թ Յ ՈՒ Ն

նոր խմբագրությամբ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն) իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետիրոջ պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

Ընկերությունն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» բաց բաժնետիրական ընկերությունը «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի N 494-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 442-Ն որոշման համաձայն:

Ընկերությունը «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» բաց բաժնետիրական ընկերության (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժնի կողմից՝ 04.06.2009 թ., գրանցման թիվ՝ 286.130.07273, ՀՎՀՀ՝ 02707093, գտնվելու վայրը՝ քաղ. Երևան, Միեր Մկրտչյան 5) իրավահաջորդն է՝ փոխանցման ակտին համապատասխան:

Ընկերության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր): Ընկերության՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմին:

2. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք), այլ օրենքներով ու իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

3. Հիմնադրի և ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերություն,

հայերեն կրճատ՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ,

ռուսերեն լրիվ՝ Закрытое акционерное общество «Электронаин караварман ентакаруцвацкнери нердрман грасеняк»,

ռուսերեն կրճատ՝ ЗАО «ЭКЕНГ»,

անգլերեն լրիվ՝ «Elektronayin karavarman yentakarutsvadzkneri nerdrman grasenyak» Close Joint-Stock Company,

անգլերեն կրճատ՝ «EKENG» CJSC.

5. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1:

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Ընկերության գործունեության հիմնական նպատակներն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նույնականացման քարտերի և Հայաստանի Հանրապետության ազգային հեռահաղորդակցական ցանցի ներդրման անհրաժեշտ գործընթացների և ընթացակարգերի կազմակերպումն ու ապահովումը,

2) քաղաքացիներին ու բիզնեսին մատուցվելիք էլեկտրոնային ծառայությունների ձևավորման և ինտեգրման աշխատանքների իրականացումը:

7. Ընկերության խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության անունից Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտերի ներդրման և քաղաքացիներին ու բիզնեսին մատուցվելիք էլեկտրոնային ծառայությունների ձևավորման ու ինտեգրման աշխատանքների պատվիրատուի գործառույթների իրականացումը.

2) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի կողմից համաձայնեցված «Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի ներդրման միջոցառումների ժամանակացույցի», անհրաժեշտության դեպքում նաև Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման տարեկան ժամանակացույցի և նշված ուղղություններով միջոցառումների բյուջեի կազմումը.

3) հանրապետության տարածքում քաղաքացիների և գործարար միջավայրի համար հասանելի, բարձր արագագործությամբ հեռահաղորդակցական ցանցային ենթակառուցվածքի ձևավորման և ինտեգրման աշխատանքների պատվիրատուի գործառույթների իրականացումը.

4) մրցույթների անցկացումը, առաջարկների գնահատումն ու վերլուծումը, եթե դրանք Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի բացառիկ իրավասությունը չեն.

5) նպատակների իրականացման նպատակով պետություն-մասնավոր հատված համագործակցության հաստատումը.

6) նպատակների լրիվ իրականացման մոնիթորինգը՝ ներառյալ Համաշխարհային բանկի համար ընդունելի ձևով հաշվետվություններ պատրաստելն ու ներկայացնելը.

7) ժամանակացույցներով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ վերահսկողությունը, եթե դրանց որևէ բաղադրիչի իրականացումը վերապահված չէ երրորդ անձի.

8) վարկային կամ դրամաշնորհային ծրագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների (այդ թվում՝ նաև խորհրդատվական) ձեռքբերումը, եթե նպատակների իրականացման պլանի համաձայն դրանց որևէ բաղադրիչի իրականացումը վերապահված չէ երրորդ անձի.

9) վարկային, ներդրումային կամ դրամաշնորհային ծրագրերով նախատեսված մասհանումների համար անհրաժեշտ դիմումները նախապատրաստելն ու ներկայացնելը.

10) գործունեության համար անհրաժեշտ նախագծային աշխատանքների, փորձագիտական գնահատումների պատվիրումը կամ իրականացումը.

11) Հայաստանի Հանրապետության բոլոր պետական գերատեսչություններում ձևավորվելիք էլեկտրոնային կառավարման գծով պատասխանատուների լիազորությունների սահմանումը, նրանց ուսուցումների կազմակերպումը և աշխատանքի համակարգումը.

12) մինչև կենտրոնացված հավաստագրման կենտրոնի ստեղծումը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, իրավաբանական անձանց և պետական մարմիններին էլեկտրոնային ստորագրության հավաստագրման ծառայությունների տրամադրումը.

13) նպատակների իրականացման հետ կապված վճարումների ղեկավարումը և եռամսյա հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնելը:

8. Ընկերությունը կարող է իրականացնել սույն կանոնադրությամբ չնախատեսված, օրենքով չարգելված, էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների զարգացմանը միտված ցանկացած այլ ձեռնարկատիրական գործունեություն: Ընկերությունն օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով կարող է զբաղվել միայն հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա:

III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Ընկերությունը համարվում է ստեղծված և կարող է գործել ընկերության՝ սահմանված կարգով պետական գրանցման պահից:

10. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվներ բացելու Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ ինչպես Հայաստանի Հանրապետության արժույթով, այնպես էլ՝ արտարժույթով:

11. Ընկերությունը կարող է ունենալ իր ֆիրմային անվանմամբ, հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ:

12. Ընկերությունն իր պարտավորությունների կատարման համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Ընկերությունը պատասխանատու չէ հիմնադրի պարտավորությունների համար:

Հիմնադիրը պատասխանատու չէ ընկերության պարտավորությունների համար:

13. Ընկերությունն իրավունք ունի՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերելու գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու դրանք և դրանցից ստացված եկամուտը.

2) ինքնուրույնաբար կազմավորելու իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալու բանկային ու առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկելու և բաշխելու արժեթղթեր.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքելու պայմանագրեր և կրելու պարտավորություններ.

5) ինքնուրույնաբար ընտրելու իր արտաքին ձեռնարկատիրական գործունեության վարման կարգը, այն իրականացնելու անմիջականորեն՝ առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով.

6) ունենալու արտարժույթով միջոցներ, դրանք ստանալու որպես արտաքին ձեռնարկատիրական գործունեության արդյունք և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով դրանք ձեռք բերելու և ինքնուրույնաբար տնօրինելու, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վաճառելու.

7) ինքնուրույնաբար պլանավորելու իր գործունեությունը, որոշելու թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքն սպառողներին.

8) ստեղծելու մասնաճյուղեր և բացելու ներկայացուցչություններ՝ օրենքի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան:

14. Ընկերությունը պարտավոր է՝

1) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն.

2) ապահովել ընկերության փաստաթղթերի (ընկերության կանոնադրություն, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հավաստող փաստաթղթեր, ընկերության ներքին

փաստաթղթեր, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնակարգեր, տարեկան հաշվետվություններ, հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, կառավարման մարմինների նիստերի արձանագրություններ, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթեր) պահպանումը:

IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

15. Ընկերության կանոնադրական կապիտալը 25 100 000 (քսանհինգ միլիոն հարյուր հազար) դրամ է, որը կազմում է 2510 (երկու հազար հինգ հարյուր տասը) հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 10000 (տասը հազար) դրամ է:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը բաշխվում և պատկանում են Հայաստանի Հանրապետությանը:

16. Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում սույն կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարվելուց հետո և ընկերության՝ սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից:

17. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է ավելացվել ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման միջոցով:

Ընկերությունը կարող է ընդունել որոշում լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին՝ միայն ընկերության կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի նոր քանակի սահմաններում:

18. Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է՝

1) շահույթի մի մասը ներդնել կանոնադրական կապիտալում՝ տեղաբաշխելով նոր բաժնետոմսեր.

2) իրեն պատկանող կանոնադրական կապիտալի չափից ավելի գույքի արժեքը կամ դրա մի մասը փոխանցել կանոնադրական կապիտալ:

Ընկերությունը չի կարող թողարկել բաժնետոմսեր՝ իր ձեռնարկատիրական գործունեության հետևանքով առաջացած պարտքերը մարելու համար:

19. Ընկերությունն իրավունք չունի կանոնադրական կապիտալը նվազեցնելու օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ընկերության նվազագույն կանոնադրական կապիտալի չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումն ընդունվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

V. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

20. Ընկերությունը կարող է տեղաբաշխել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված արժեթղթեր:

21. Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխելու միայն սովորական բաժնետոմսեր: Ընկերության թողարկած սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

22. Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխվում են ընկերության բաժնետերերի ռեեստրում առկա՝ բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման միջոցով:

23. Բաժնետոմսն անբաժանելի է:

24. Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց վճարումը պետք է կատարվի դրանց տեղաբաշխման մասին ընդունված որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից մեկ ամսվա ընթացքում:

Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է իրականացվել դրամով, արժեթղթերով, այլ գույքով կամ գույքային իրավունքներով, կամ այլ իրավունքներով, որոնք ունեն դրամային արժեք:

Ընկերության բաժնետոմսերը և մյուս արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:

Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը գույքով կամ գույքային իրավունքներով իրականացնելիս՝ դրանց դրամային արժեքը ենթակա է անկախ փորձագիտական վերստուգման (աուդիտի):

25. Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ:

Ընկերության շահույթից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, ապա այդ հիմնադրամին հատկացումները կատարվում են շահույթի 5 տոկոսի չափով:

Պահուստային հիմնադրամն օգտագործվում է ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև ընկերության պարտատոմսերը մարելու համար, եթե ընկերության շահույթն այդ նպատակի համար բավարար չէ:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար (բացի օրենքով սահմանված դեպքերից):

26. Ընկերությունը բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է ստեղծել նաև սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ հիմնադրամներ:

27. Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազումը: Եթե ընկերության՝ նշված ակտիվների արժեքը պակաս է օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, ապա ընկերությունը ենթակա է լուծարման:

Եթե սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցման կամ ընկերության լուծարման մասին որոշում չի ընդունվել, ապա ընկերության հիմնադիրը, պարտատերերը, ինչպես նաև պետության կողմից լիազորված մարմիններն իրավունք ունեն պահանջելու ընկերության լուծարումը՝ դատական կարգով:

VI. ՀԻՄՆԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

28. Ընկերության յուրաքանչյուր բաժնետոմս իր սեփականատերը հանդիսացող բաժնետիրոջը տալիս է միևնույն իրավունքները:

29. Բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը՝ հիմնադիրը, իրավունք ունի՝

- 1) իրականացնելու ընկերության կառավարումը.
- 2) ստանալու շահութաբաժիններ՝ ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
- 3) ստանալու ընկերության գործունեության մասին ցանկացած տեղեկատվություն, այդ թվում՝ ծանոթանալու հաշվապահական հաշվեկշիռին, հաշվետվություններին, ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.

4) ընկերության ընդհանուր ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի (անձանց).

5) ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում հանդես գալու առաջարկություններով.

6) ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկելու իրեն պատկանող՝ լրիվ վճարված բաժնետոմսերի թվով.

7) ընկերության լուծարման դեպքում ստանալու պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո ընկերությանը մնացած գույքը կամ դրա արժեքը.

8) ընկերության միջոցների հաշվին ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալու համապատասխան թվով սովորական բաժնետոմսեր.

9) օգտվելու օրենքով և ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

30. Հիմնադիրը (բաժնետերը) պարտավոր է՝

1) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով գումարել ընկերության ընդհանուր ժողով՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերով.

2) ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով կատարել դրամական և գույքային ներդրումներ.

3) չհրապարակել ընկերության գործունեության մասին գաղտնի տեղեկատվությունը:

VII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՌՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

31. Ընկերությունն իրավունք ունի հայտարարելու (որոշում ընդունելու) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային և (կամ) տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Շահութաբաժինները վճարվում են ընկերության տվյալ տարվա ընթացիկ զուտ շահույթից:

Ինչպես տարեկան, այնպես էլ եռամսյակային և կիսամյակային շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունելու շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշումների գործողության ժամկետը սահմանվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, որը, սակայն, չի կարող գերազանցել մեկ տարին:

Շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

32. Ընկերությունն իրավունք չունի հայտարարելու (որոշում ընդունելու) բաշխված բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

1) լրիվ չի վճարել ընկերության կանոնադրական կապիտալը.

2) շահութաբաժիններ վճարելու մասին որոշման ընդունման պահին ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկացման) հայտանիշներին կամ նշված հայտանիշներն ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

3) ընկերության զուտ ակտիվների արժեքը փոքր է ընկերության կանոնադրական կապիտալի գումարից կամ այդ գումարից փոքր կդառնա շահութաբաժինների վճարման հետևանքով.

4) ընկերությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը՝ օրենքով սահմանված կարգով:

VIII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

33. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է:

34. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

1) ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, ընկերության կանոնադրության հաստատումը՝ նոր խմբագրությամբ, նրա կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը,

2) բաշխված բաժնետոմսերի թվի ավելացումը՝ ընկերության կողմից բաշխված բաժնետոմսը փոխարկելով երկու կամ ավելի բաժնետոմսերի՝ համապատասխանաբար կրճատելով դրանց անվանական արժեքը.

3) բաշխված բաժնետոմսերի թվի կրճատումը՝ միաձուլելով ընկերության կողմից բաշխված երկու կամ ավելի բաժնետոմսերը՝ դրանք դարձնելով մեկ՝ նույն ձևի և տեսակի բաժնետոմս՝ համապատասխանաբար ավելացնելով այդ բաժնետոմսի անվանական արժեքը.

4) ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը՝ բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի բաշխման միջոցով.

5) ընկերության տնօրենների խորհրդի անդամների նշանակումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

6) ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունն ու նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

7) ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշիվների հաստատումն ու նրա շահույթների և վնասների բաշխումը.

8) ընկերությունը վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշում ընդունելը, լուծարային հանձնաժողովի անդամների նշանակումը, լուծարային հաշվեկշիռների հաստատումը.

9) օրենքով սահմանված կարգով խոշոր գործարքների կնքումը.

10) օրենքով նախատեսված այլ հարցեր:

35. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունները՝ ընկերության միակ բաժնետիրոջ իրավունքով, իրականացնում է հիմնադիրը (բաժնետերը) կամ նրա կողմից լիազորված անձը՝ հիմնադրի կողմից սահմանված լիազորությունների շրջանակներում:

36. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնելու նպատակով ընկերությունն ստեղծում է տնօրենների խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ): Խորհրդի իրավասությանն են պատկանում ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարման հետ կապված բոլոր հարցերը՝ բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:

37. Խորհրդի անդամները նշանակվում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի կողմից:

38. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

1) ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկություններ ներկայացնելը՝ վերջինիս իրավասության սահմաններում.

2) շահագրգռվածության առկայության դեպքում՝ օրենքով սահմանված կարգով գործարքների կնքումը.

3) ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայացվելիք՝ ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը.

4) ընկերության աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը.

5) ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայացվելիք՝ ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը.

6) ընկերության բաժնետոմսերի միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

7) ընկերության ամենամյա ծախսերի և եկամուտների նախահաշվի, կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը.

8) ընկերության կողմից դուստր ընկերությունների ստեղծումը, դուստր և կախյալ ընկերությունների գործունեությանը մասնակցությունը՝ օրենքով սահմանված կարգով.

9) ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը:

39. Խորհուրդն իր իրավասության սահմաններում որոշումներ է ընդունում խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե օրենքով և սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Խորհուրդի նիստը տեղի է ունենում առնվազն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ:

Քվեարկության ժամանակ խորհրդի անդամների ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով):

40. Ընկերության խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները չեն կարող համատեղվել: Խորհրդի նախագահը չի կարող ընկերությունում զբաղեցնել այլ վճարովի պաշտոն:

41. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

2) ներկայացնում է ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

3) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում դրանք.

4) կազմակերպում է նիստերի արձանագրությունների վարումը:

Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, խորհրդի նախագահի հանձնարարությամբ, կատարում է խորհրդի անդամներից մեկը:

42. Ընկերության գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է ընկերության տնօրենը (այսուհետև՝ տնօրեն), ում նշանակում կամ լիազորությունները վաղաժամկետ դադարեցնում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը: Նշանակումից հետո խորհրդի նախագահը տնօրենի հետ ստորագրում է աշխատանքային պայմանագիր:

43. Տնօրենը՝

1) տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, կատարում է գործարքներ ընկերության անունից.

2) ներկայացնում է ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

3) գործում է առանց լիազորագրի.

- 4) տալիս է լիազորագրեր.
- 5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային).
- 6) բանկերում բացում է ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.
- 7) նախապատրաստում է առաջարկություններ ընկերության վճարվող շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ.
- 8) հաստատում է ընկերության առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները և նշանակում դրանց ղեկավարներին.
- 9) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- 10) սահմանված կարգով աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է ընկերության աշխատողներին.
- 11) աշխատողների նկատմամբ կիրառում է կարգապահական պատասխանատվության և խրախուսման միջոցներ.
- 12) ունի այլ իրավունքներ և պարտականություններ, որոնք սահմանվում են տնօրենի և խորհրդի նախագահի միջև կնքված աշխատանքային պայմանագրով.
- 13) սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացնում է ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ գործառույթներ:

IX. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

44. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը վերահսկելու նպատակով ընտրում է ընկերության վերստուգող հանձնաժողով:

45. Վերստուգող հանձնաժողովը հետևում է ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին, այլ իրավական ակտերին և ընկերության կանոնադրությանը:

46. Վերստուգող հանձնաժողովի գործունեության կարգը սահմանվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատվող ներքին փաստաթղթերով՝ վերստուգող հանձնաժողովի կանոնակարգով:

47. Վերստուգող հանձնաժողովն իրավունք ունի ստուգելու ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքները, ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը՝ սեփական նախաձեռնությամբ, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչպես նաև հիմնադրի պահանջով:

48. Վերստուգող հանձնաժողովն իրավունք ունի պահանջելու ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի արձանագրությունը:

49. Վերստուգող հանձնաժողովի պահանջով նրան պետք է ներկայացվեն ընկերության, դրա մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

50. Վերստուգող հանձնաժողովի անդամներն ընտրվում են ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ 3 տարի ժամկետով:

51. Վերստուգող հանձնաժողովի անդամները հաշվետու են ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին:

52. Վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության չափերը և պայմանները սահմանվում են ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

53. Վերստուգող հանձնաժողովի անդամ կարող են լինել ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ֆիզիկական անձինք:

54. Վերստուգող հանձնաժողովի նախագահն ընտրվում է վերստուգող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

55. Վերստուգող հանձնաժողովի իրավասությունները, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող են դրվել վերստուգողի վրա:

56. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով ընկերությունը նշված աշխատանքներում կարող է ներգրավել արտաքին աուդիտորների (կազմակերպություն կամ ֆիզիկական անձ)՝ նրանց հետ կնքելով համապատասխան պայմանագրեր: Ընկերության աուդիտն իրականացնող անձն ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման վերաբերյալ ներկայացնում է գրավոր եզրակացություն:

57. Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագրերը կնքում է ընկերության խորհրդի նախագահը, իսկ ընկերության աուդիտն իրականացնող անձի ծառայությունների դիմաց վճարվող գումարի չափը որոշվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

X. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

58. Ընկերությունը կարող է ունենալ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

XI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

59. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են, ինչպես նաև ընկերության՝ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

60. Ընկերության մասնաճյուղի և (կամ) ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները մտցվում են ընկերության կանոնադրության մեջ:

61. Ընկերության կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև ընկերության՝ նոր խմբագրությամբ կանոնադրությունը երրորդ անձի համար իրավաբանական ուժ են ձեռք բերում դրանց պետական գրանցման, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նման գրանցում կատարող պետական մարմնին կատարված փոփոխությունների մասին իրազեկելու պահից:

XII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

62. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով՝ միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման ձևերով:

Ընկերությունը, բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից:

63. Ընկերության լուծարումը հանգեցնում է ընկերության գործունեության դադարմանը՝ առանց ընկերության իրավունքների և պարտականությունների՝ իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցման:

64. Ընկերությունը կարող է լուծարվել՝

1) նրա հիմնադրի որոշմամբ՝ սահմանված ժամկետը լրանալու կապակցությամբ, ինչպես նաև իր առջև դրված խնդիրներն ու նպատակներն իրականացնելուց հետո.

2) դատարանի կողմից ընկերության գրանցումն անվավեր ճանաչվելու դեպքում՝ կապված դրա ստեղծման ժամանակ թույլ տրված՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների խախտումների հետ.

3) դատարանի վճռով՝ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու, օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների բազմակի կամ կոպիտ խախտումների դեպքում.

4) սնանկացման հետևանքով.

5) օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Լուծարային հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկվեն հիմնադրի ներկայացուցիչները:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, նախքան լուծարման մասին որոշման ընդունումը, պետք է հաստատի գործադիր մարմնի կողմից ներկայացված ամփոփիչ հաշվեկշիռն ու ընկերության լուծարման մասին որոշման նախագիծը:

Ընկերությունը լուծարվում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած՝ պետական գրանցամատյանում համապատասխան գրառման կատարման պահից: